

«Էլեկտրոնային դիմում»

Խնդիր՝

Քաղաքում ապրող յուրաքանչյուր քաղաքացի բախվում է տարատեսակ ենթակառուցվածքային և այլ խնդիրների, ինչպիսիք են շենքերի նաքերը, ընկած ծառերը, աղբը, քայքայված խողովակները, վանդալիզմի հետևանքները, վնասված նստարանները և այլն:

Սովորաբար նման անսարքությունները տեղի են ունենում ամենաանհարմար պահին, երբ քաղաքացին շտապում է աշխատանքի և չի կարողում կամ պարզապես չգիտի ուր գանգել և տեղեկացնել անսարքության մասին կամ պարզապես չունի բավարար ժամանակ հեռախոսով բացատրելու, թե որտեղ և ինչ է պատահել:

Լուծում՝

Քաղաքացին ներբեռնում է Electronic Appeals ծրագիրն իր հեռախոսի ծրագրային համակարգի մեջ և պարզապես լուսանկարում է անսարքությունը աշխատանքի գնալիս՝ առանց ավելորդ ժամանակ ծախսելու: Ծրագիրն ավտոմատ կերպով փոխանցում է լուսանկարը քաղաքում գտնվող պատասխանատու անձին՝ նշելով GPS կոորդինատները:

Համակարգչային ծրագիրը հաշվարկում է հաղորդակցման վարկանիշը: Օրինակ, եթե ընկած ծառը լուսանկարված է 10 տարբեր մարդկանց կողմից 30 րոպեի ընթացքում, ապա այս խանգարումը պետք է ստանա հնարավորինս արագ լուծում:

Եթե քանդված ծեփը նկարված է երկու հոգու կողմից մեկ շաբաթվա ընթացքում, ապա այս անհարմարությունը առաջնահերթ չէ:

Քաղաքի պատասխանատու ծառայողը որոշում է կայացնում և միջոցներ է ձեռնարկում խնդրի լուծման համար: Եթե քաղաքացին գրանցված է համակարգում, ապա նա պաշտոնական արձագանք է ստանում խնդրի լուծման և վերացման վերաբերյալ: Սա բարձրացնում է քաղաքացիական ինքնագնահատականը և ցույց տալիս՝ ինչպես է սահմանադրապես քաղաքային կյանքին՝ դարձնելով այն ավելի լավը: